



ՎԵՐՋԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և
ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ
ՓՈՐՁԸ

AMNESTY
INTERNATIONAL



Amnesty International-ը 10 միլիոն մարդուց բաղկացած շարժում է, որը մոբիլիզացնում է մարդասիրությունը յուրաքանչյուրի մեջ և իրականացնում է արշավ փոփոխությունների համար, որ մենք կարողանանք իրացնել մեր մարդու իրավունքներից:

Մեր տեսլականն է յուրաքանչյուր անձի համար ապահովել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների միջազգային չափանիշներում ամրագրված բոլոր իրավունքները:

Մենք գործում ենք որևէ կառավարությունից, քաղաքական գաղափարախոսությունից, տնտեսական շահերից կամ կրոնից անկախ և հիմնականում ֆինանսավորվում ենք մեր անդամակցություններով և հանրային նվիրատվություններով:

Մենք հավատում ենք, որ մարդկանց հետ համերաշխ և կարեկցանքով գործելը ամենուր կարող է փոխել մեր հասարակությունները դեպի լավը:

© Amnesty International 2022

Այս փաստաթղթի բովանդակությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նշված է, լիցենզավորված է Creative Commons (վերագրում, ոչ առևտրային, առանց ածանցյալների, միջազգային 4.0) լիցենզիայի ներքո:

<https://creativecommons.org/licenses/by-nc-nd/4.0/legalcode>

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել մեր կայքի (www.amnesty.org) թույլատվությունների բաժինը

Եթե նյութը վերագրվում է այլ հեղինակային իրավունքի սեփականատիրոջից, Amnesty International-ից բացի, այս նյութը ենթակա չէ Creative Commons արտոնագրի:

Առաջին անգամ իրապարակվել է 2022

by Amnesty International Ltd-ի կողմից,
Peter Benenson House, Իսթոն Աթորիթ 1, Լոնդոն
WC1X 0DW

Index: EUR 54/5214/2022

ԲՆՏՐԻՆԱԿԸ՝ԱՆԳԼԵՐԵՆ

amnesty.org



ԵՏՆԱՆԿԱՐ: Ստեփանակերտի բնակիչները՝ շենքի նկուղում, որը (անջատված տարածաշրջանի հանդիսացող) Լեռնային Ղարաբաղի շրջը տեղի ունեցած հակամարտության ժամանակ օգտագործվում էր որպես ապաստարան, հոկտեմբերի 7, 2020թ. © REUTERS/Stringer

AMNESTY
INTERNATIONAL



ԱՄՓՈՓԱԳԻՐ

Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալվող զինված հակամարտությունը, որը վիճելի տարածք էր Ադրբեջանի և Հայաստանի միջև երկու պետությունների անկախանալուց շատ առաջ, այժմ նախկին Խորհրդային Միության ամենաերկարատև հակամարտությունն է: 1990-ականներին Ադրբեջանը հսկայական տարածքային կորուստներ ունեցավ և փորձում էր տեղավորել ավելի քան կես միլիոն տեղահանված մարդկանց, սակայն իրավիճակը փոխվեց 2020թ.-ի 44 օրվա մարտերի ընթացքում, երբ Հայաստանը կորցրեց իր օկուպացրած տարածքի մեծ մասը Լեռնային Ղարաբաղում և նրա շրջակայքում, և տասնյակ հազարավոր էթնիկ հայեր տեղահանվեցին:

2020 թ.-ին վերսկսված մարտերն ընդգծեցին որոշակի խմբի՝ տարեցների յուրատեսակ ռիսկերը: Էթնիկ հայ քաղաքացիական անձանց կեսից ավելին, որոնք սպանվեցին, 60 տարեկանից բարձր էին: Ամենածերը 89 տարեկան էր: Շատերը կալանքի տակ գտնվելիս ենթարկվել էին խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի: Մյուսները դեռևս անհայտ կորած են համարվում: Այս գեկույցն ուսումնասիրում է միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, ներառյալ ռազմական հանցագործությունները, որոնք կատարել են ադրբեջանական ուժերը տարեցների նկատմամբ 2020 թվականի մարտերի ընթացքում և դրանցից հետո: Չեկույցը նաև անդրադառնում է Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տեղահանված տարեցների կյանքի պայմաններին և այն մտտեցումներին, որոնցով տարեցները չեն արժանանում իշխանությունների մարդասիրական արձագանքին:

Այս գեկույցի հետազոտությունն իրականացվել է 2021 թվականի սեպտեմբերի և դեկտեմբերի միջև՝ ներառյալ այն անձնական հարցազրույցները, որոնք անցկացվել են Հայաստանում և Ադրբեջանում 2021 թվականի նոյեմբերին: <<Amnesty International>>-ը հարցազրույց է վերցրել 60-ից 90 տարեկան 22 տարեց կանանցից և 20 տարեց տղամարդկանցից: <<Amnesty International>>-ը նաև հարցազրույց է վերցրել տարեցների 18 հարազատներից, հատկապես այն դեպքերում, երբ տարեց մարդը սպանվել է կամ եղել է անհատ կորած: <<Amnesty International>>-ին չի տրվել թույլտվություն Լեռնային Ղարաբաղ գնալու համար, որտեղ մուտքը 2021 թվականի սկզբից սկսած մեծապես վերահսկվում է ռուս խաղաղապահ ուժերի կողմից: Թեև <<Amnesty International>>-ը կարողացավ հեռակա կարգով տարեցների հետ հարցազրույցներ անցկացնել Լեռնային Ղարաբաղում, տեղում մուտք ունենալու հնարավորության այս բացակայությունը խոչընդոտ հանդիսացավ դեռևս այնտեղ ապրող տարեցների վիճակի մասին մանրակրկիտ գնահատում իրականացնելու հնարավորությունների համար:

<<Amnesty International>>-ն առանձին հարցազրույցներ է անցկացրել Ադրբեջանում 40 տարեցների հետ, ովքեր տեղահանվել էին Լեռնային Ղարաբաղից կամ հարակից շրջաններից 1988-ից 1994 թվականներին: Այդ հարցազրույց տվողներից շատերն ասում էին, որ նրանք այդ ժամանակ ակնատես են եղել կամ զոհ են դարձել Էթնիկ հայերի կամ հայկական ուժերի կողմից իրականացրած բռնությանը, իսկ ոմանք խոսում էին տարեց քաղաքացիական անձանց շրջանում անհամաչափ զոհերի մասին, որոնք, ըստ նրանց, ավելի դանդաղ էին ընթանում կամ առավել դժվարությամբ էին փախչում: Քանի որ այս իրադարձությունները տեղի էին ունեցել շատ տարիներ առաջ, դժվար էր ստուգել նկարագրությունները: միշտ չէ, որ մարդիկ հիշում էին զոհերի անուններն ու տարիքը և չունեին վկայությունները հաստատող փաստաթղթեր: Սա ոչ մի կերպ չի նվազեցնում ադրբեջանցիների, ներառյալ տարեց ադրբեջանցիների դեմ Էթնիկ հայերի կամ հայկական ուժերի կողմից 1988-1994 թվականներին կատարված հանցագործությունների լրջությունը, ներառյալ զանգվածային տեղահանումները և ունեցվածքի ոչնչացումը: Հայկական ուժերը նաև անկանոն և անհամաչափ հարվածներ էին հասցրել, որոնց հետևանքով քաղաքացիական անձինք էին սպանվել

ՎԵՐՁԻՆԸ ՓԱՆՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

և ծանր վիրավորումներ ստացել Ադրբեջանում 2020 թվականի մարտերի ընթացքում, ինչի մասին <<Amnesty International>>-ը նախկինում հայտնել էր: Այս գեկույցը մեծ մասամբ կենտրոնանում է հակամարտության ամենավերջին դրսևորման տարբեր ասպեկտների վրա, որտեղ տարեցները էթնիկ հայկական համայնքներում ենթարկվել են բռնության անհամաչափ ազդեցությանը:

Համաձայն միջազգային իրավունքի՝ մեծ տարիքի հատուկ սահմանում չկա: Մինչ ժամանակագրական տարիքը, ինչպիսին է 60-ը, կամ տեղական կենսաթոշակային տարիքը հաճախ օգտագործվում է որպես չափանիշ, սա միշտ չէ, որ արտացոլում է՝ արդյոք անձը ենթակա է ռիսկերի, որոնք սովորաբար կապված են մեծ տարիքի հետ: <<Amnesty International>>-ը նախընտրում է մեծ տարիքի նկատմամբ համատեքստին հատուկ մոտեցումը, որը հաշվի է առնում այն ուղիները, որոնցով մարդիկ նույնականացվում և ինքնորոշվում են որպես տարեցներ տվյալ համատեքստում, ինչը համահունչ է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՅԳ) կողմից ընդունված մոտեցման հետ: Այս գեկույցում հարցազրույց տված բոլոր տարեցներն առնվազն 60 տարեկան էին, սակայն այն ապացույցի պատճառով, որ ադրբեջանական ուժերը բռնությամբ թիրախավորել են 50 տարեկանից բարձր էթնիկ հայ տղամարդկանց այն կասկածանքով, որ նրանք մասնակցել են հակամարտության նախորդ գործողություններին, 50-անց տղամարդկանց մի քանի դեպքեր են ներառվել, ովքեր սպանվել են կամ համարվում են անհայտ կորած:

ԱՆՋԱՄԱԶՊ ԲՈՒՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ

Այս գեկույցի համար հարցազրույց տված տարեցները 2020 թվականի հակամարտության ընթացքում գրեթե միշտ վերջինն են եղել, որ լքել են իրենց գյուղերը կամ քաղաքները: Մարտերի վաղ փուլերի ընթացքում տարհանման առաջնահերթություն է տրվել կանանց և երեխաներին, իսկ 18-ց 55 տարեկան տղամարդիկ հիմնականում զորահավաքով գնացել են ռազմաճակատ կամ որպես կամավորներ ծառայել պատերազմին: Սա նշանակում էր, որ այն ժամանակ, երբ ադրբեջանական ուժերը առաջ են շարժվել դեպի հայկական գյուղեր և քաղաքներ, հաճախ միակ մնացած մարդիկ եղել են տարեցները՝ մասնավորապես տարեց տղամարդիկ:

Որոշ տարեցների համար ֆիզիկական հաշմանդամությունը և առողջական խնդիրները հեռանալն ավելի դժվար և առավել ռիսկային են դարձրել իրենց համար, մինչդեռ նրանք, ովքեր ունեցել են հոգեւորական հաշմանդամություն կամ դեմենցիա (թուլամտություն), հավանաբար դժվարացել են հասկանալու հեռանալու անհրաժեշտությունը կամ հրատապությունը:

72-ամյա Բելլա Հարությունյանն ասում էր, որ անհնար է եղել Հարդուբում գտնվող իրենց տնից տարհանման անհրաժեշտությունը փորձել բացատրել ամուսնուն՝ Էռնեստին, ով 84 տարեկան էր և թեթև դեմենցիա ուներ: Դիմադրելով իր ընտանիքի հետ փախչելուն՝ Էռնեստը սպանվել է ինչ-որ պահի այն բանից հետո, երբ ադրբեջանական ուժերը մտել են նրա քաղաք, իսկ նրա խեղձած մարմինը հայտնաբերվել է մի քանի ամիս անց: Բելլան ասում էր. «Նրանք սպանել են նրան, հեռացրել մաշկի այն հատվածը, որտեղ նա դաջվածքներ էր ունեցել... Ո՞վ կմտածեր, որ այսօր հնարավոր են նման բաներ՝ գլխատումներ ու խեղումներ»: Ըստ նրա որդու՝ Էռնեստի ձեռքերից մեկը կտրված է եղել մարմնից:

Բայց շատ տարեցներ, որոնք չունեին հաշմանդամություն, ևս հետ են մնացել: Ոմանք ասում էին, որ ցանկանում էին աջակցել պատերազմին՝ զինվորների համար սնունդ պատրաստելով կամ լվացք անելով: Մյուսները ցանկանում էին հոգ տանել իրենց գույքի մասին, ներառյալ անասունները, մինչ մնացած բնակչությունը հեռացել էր: Բոլոր տարեցները խորը կապվածություն էին նկարագրում իրենց տների ու հողի հետ և՛ որպես արժեքավոր ակտիվներ ու եկամտի աղբյուրներ, և՛ նաև իրենց ունեցած զգացմունքային արժեքի համար: «Ես մի քանի անգամ տարել եմ պապիկիս, բայց ամեն անգամ նա... պիտու էր, որ ավտոստոպով հետ վերադառնայինք գյուղ», - ասում էր մի տղամարդ, ում 90-ամյա պապիկն ապօրինի կերպով ձեռքակալվել էր ադրբեջանական ուժերի կողմից: «Նա ասել էր, որ իր կնոջ գերեզմանաքարն այնտեղ է, [և] նա չէր ուզում այլ տեղ լինել»:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպանի՝ առնվազն 48 տարեց քաղաքացիական անձ է սպանվել մարտերի ընթացքում, ինչը էթնիկ հայերի շրջանում փաստաթղթերով հաստատված քաղաքացիական անձանց մահերի ընդհանուր թվի կեսից ավելին է: Մինչ ոմանք զոհվել են անկանոն հրետակոծությունից, առնվազն 30 տարեցներ ապօրինի սպանվել են ադրբեջանական ուժերի կողմից այն բանից հետո, երբ նրանք գյուղերն ու քաղաքներն իրենց վերահսկողության տակ են վերցրել: <<Amnesty International>>-ը կարողացել է ստուգել այդ դեպքերից շատերը ակնատեսների և հարազատների վկայությունների, ինչպես նաև մահվան վկայականների վերանայման, Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված պաշտոնական դատաբժշկական փորձաքննությունների և սոցիալական ցանցերում տեղադրված տեսանյութերի միջոցով: Սպանություններից շատերը եղել են արտադատական մահապատիժներ՝ երբեմն գլխատման կամ մոտ տարածությունից գնդակահարության միջոցով, և երբեմն թվում է, թե

ՎԵՐՁԻՆԸ ՓԱՏՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՊԱՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Լ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

սպանությունից առաջ ներառել են խոշտանգումներ կամ այլ դաժան վերաբերմունք, ինչպես նաև մարմինների խեղում:

Օրինակ՝ 68-ամյա Սլավիկ Գալստյանը, ով իր ընտանիքի հետ ապրում էր Մեծ Թաղերում և ուներ հոգեւորաբարձական հաշմանդամություն, չէր ցանկացել լքել իր գյուղը 2020 թվականի հոկտեմբերին: Սլավիկի մարմինը հայտնաբերվել էր ավելի քան երկու ամիս անց, և Հայաստանի իշխանությունների կողմից տրված մահվան վկայականը եզրակացրել էր, որ նրա մահը կրծքավանդակի, ստամոքսի և այլ ներքին օրգանների շոջանում հրագենային վնասվածքների պատճառով արյան տրավմատիկ կորստի հետևանքն էր: Նրա որդին՝ Աշոտը, ում կանչել էին դիակերծարան՝ մարմինը ճանաչելու համար, ասաց, որ հոր մարմինը, պարզվում է, նրա մահվան պատճառը դարձած վնասվածքներից ավելի էր խեղված եղել, «<Նրա գլուխը ջախջախված էր, կարծես մարմնի բոլոր ոսկորները ջարդված էին, նա նման էր մսի [կտորի]>>»:

Որոշ տարեցներ, ովքեր մնացել էին քաղաքներում կամ գյուղերում, կամայականորեն կալանավորվել և տեղափոխվել էին Ադրբեջանի այլ շրջանների կալանավայրեր: Այնտեղ զինվորները նրանց ենթարկել էին ծեծի և ֆիզիկական բռնության այլ ձևերի, իսկ մի դեպքում կեղծ մահապատժի, ինչն ամբողջությամբ հավասարազոր էր խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի: Տարեց տղամարդիկ, ըստ երևույթին, թիրախավորվել էին դաժան վերաբերմունքի համար, քանի որ ադրբեջանցի զինվորները կարծում էին, որ նրանք 1990-ականներին մասնակցել էին Հայաստանի պատերազմական գործողություններին: Կալանքի տակ գտնվելիս ինչպես տարեց տղամարդկանց, այնպես էլ տարեց կանանց մեթոժել էին համապատասխան բուժօգնություն տրամադրել, ինչպես նաև լուրջ հիվանդությունների և ծանր իրավիճակների դեպքում:

Տարեցների ֆիզիկական և հոգեկան առողջությունը գերության մեջ գտնվելու ժամանակ խիստ վատթարացել էր: 71-ամյա Վալերի Պողոսյանը, ով Ադրբեջանում կալանքից ազատվելուց անմիջապես հետո գլխի հեմատոմայի վիրահատություն էր տարել և սրտի կաթված ստացել, ասում էր. «< Մինչև 70 տարեկան ես երբեք որևէ հիվանդություն չեմ ունեցել, նույնիսկ բժշկական պատմություն չեմ ունեցել... [Ադրբեջանում կալանավորումից հետո] ոսկորս ու կաշիս էին մնացել>>»:

Շատ տարեցներ լուրջ հոգեբանական անհանգստության նշաններ էին ցույց տալիս, երբ խոսում էին հակամարտության ընթացքում իրենց փորձառությունների մասին: Ոմանք իրենց հարցազոյցների ընթացքում անընդհատ լաց էին լինում, իսկ մյուսները՝ զայրանում: 72-ամյա Արեգա Շահգեղյանն ասում էր, որ չէր կարողացել իր բնակարանից հեռանալ ադրբեջանական գերության մեջ եղած իր փորձառությունից հետո, որտեղ իր ամուսինը մահացել էր: «Ես ինձ շրջապատված եմ զգում: Ինձ թվում է՝ [ադրբեջանցի զինվորները] նորից են պատրաստվում ինձ գերի վերցնել»: 90-ամյա Սեդրակ Պետրոսյանը, ում գերության մեջ ոտքերով հարվածել և ծեծել էին, և ում 56-ամյա որդին անհետացել էր Ադրբեջանում բերման ենթարկվելուց հետո, հեկեկալով ասում էր. «Ես ուզում եմ մեռնել: Ես ուզում էի մահանալ բանտում, բայց ինչ-որ կերպ ողջ մնացի»:

Հարցազոյց տված 42 տարեցներից միայն երկուսին էին 2020 թվականի հակամարտության ընթացքում կամ դրանից հետո առաջարկել հոգեկան առողջության կամ հոգեւորաբարձական աջակցության որևէ տեսակի ծառայություն: Երբեմն տարեցները կամ նրանց ընտանիքի անդամները համոզվում էին հայտնում, որ որոշակի տարիքից բարձր մարդկանց համար հոգեբանական բուժումը օգուտ չունի: 71-ամյա Սուսաննա Մարտիրոսյանը, ով հակամարտության պատճառով կորցրել էր երկու որդիներին և մեկ թոռին, ասում էր. «<<Իմ հարսը իմ թոռնուհիներից երկուսին տարավ հոգեբանի մոտ նրանց հայրիկի մահից հետո: Բայց ես, ոչ, ես շատ ծեր եմ հոգեբանի մոտ գնալու համար>>»:

Հակամարտության հետևանքով առնվազն 19 քաղաքացիական անձինք դեռևս անհետ կորած են համարվում, նրանցից գրեթե բոլորը տարեցներ են, ներառյալ մեկը, ով 90 տարեկան է, և մի քանիսը հաշմանդամություն ունեցող մարդիկ են: Այս մարդկանցից ոմանք բռնի կերպով անհետացել են այն բանից հետո, երբ ուրիշները տեսել են, թե ինչպես են նրանք ձերբակալվել ադրբեջանական ուժերի կողմից. ըստ մյուս կալանավորների՝ նրանք ենթարկվել են ծեծի և այլ բռնությունների: Չնայած Եվրոպայի խորհրդի կողմից մնացած բոլոր բանտարկյալներին ազատ արձակելու կոչերին՝ Ադրբեջանը լիովին հերքում է նրանց գոյությունը՝ ասելով, որ միակ մարդիկ, ովքեր մնում են իր կալանքի տակ, «իրավասու դատարանների կողմից հանցագործությունների, այդ թվում՝ որոշ դեպքերում ռազմական հանցագործությունների համար դատապարտված անձինք են»: Հանրային հայտարարություններում այն չի հիշատակում ձերբակալված քաղաքացիական անձանց մասին:

ՏԵՂԱԶՆՄԱՆ ՄԱՐՏԱԳՐԱԿԵՐՆԵՐԸ

2020 թվականի մարտերի ընթացքում Լեռնային Ղարաբաղից հեռացած 90 հազար մարդկանցից մոտ 30 հազարը շարունակում է տեղահանված մալ Հայաստանում: Հայաստանի կառավարությունը նշանակալի քայլեր է ձեռնարկել այս բնակչությանն աջակցելու համար, այդ

ՎԵՐՁԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՊԱՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԶՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

թվում՝ 2020 թվականի նոյեմբերի զինադադարին անմիջապես հաջորդող ամիսներին կացարաններ տրամադրելով, տեղահանվածներին ժամանակավոր վճարումներ կատարելով և նրանց անվճար բժշկական օգնություն առաջարկելով: Սակայն այս աջակցությունը բավարար չէր, որպեսզի հնարավորություն տար տարեցներին վերականգնել իրենց կյանքը իրենց տները, աշխատանքը, հողը և անասունները կորցնելուց հետո:

Հայաստանում որոշ տարեցներ ապրում էին մարտերից անմիջապես հետո կառավարության կողմից տրամադրված կացարաններում, սակայն այս հետազոտության պահին բոլոր հարցազրույց տվածները Հայաստանում ապրում էին վարձով բնակարաններում: Տարեցները ճնշող մեծամասնությամբ ի վիճակի չէին ինքնուրույն վճարել վարձավճարները, ուստի սովորաբար ապրում էին հարազատների կամ չափափառ զավակների հետ, նույնիսկ երբ մարդաշատ էին կամ տարեց մարդն անհարմար էր զգում այդպես ապրել. «Մենք զգում ենք, որ բեռ ենք մեր երեխաների համար. մենք ապրում ենք այնպես, կարծես վարձակալողներ լինենք»,- ասում էր 70-ամյա Կարեն Շահնուբարյանը, ով իր ընտանիքի հետ ապրում է հարավային Հայաստանում:

Տարեցների մեծամասնությանն առաջարկվող բնակարանային միակ այլ տարբերակը ոչ ֆորմալ բնակարաններն էին, որոնք հագեցած չէին ջեռուցմամբ, էլեկտրականությամբ կամ գազով: 70-ամյա Սոսիկ Մինասյանն ասում էր, որ ինքն ու իր 85-ամյա ամուսինը, ով խուլ է և ունի սրտի ծանր հիվանդություն, ապրում են մեկ սենյականոց տնակում, որը չունի զուգարան և էլեկտրականություն, և որն իրենց ծանոթն է թույլ տվել, որ անվճար զբաղեցնեն: Նրանց չափափառ զավակներն ապրում են մոտակայքում, սակայն Սոսիկը ասում էր, որ անհարմար է զգում նրանցից օգնություն խնդրել: «Նրանց հետ ապրելն իսկապես դժվար է, քանի որ մենք այսքան տարիներ առանձին ենք ապրել»:

Ի տարբերություն Հայաստանում ապրողների՝ Լեռնային Ղարաբաղում բնակվող տեղահանվածներին տրամադրվում է անվճար կացարան հյուրանոցներում կամ հասարակական շենքերում կամ վարձավճարը վճարելու նպատակով ֆինանսական աջակցություն: Մինչ տարեցների մեծ մասը գոհունակություն էր հայտնում այս արտոնությունների համար, նրանք երբեմն վրդովվում էին գաղտնիության բացակայությունից: Որոշ դեպքերում Հայաստանում նման աջակցության բացակայությունն ըստ էության ստիպում էր տեղահանված տարեցներին ապրել Լեռնային Ղարաբաղում, նույնիսկ այն դեպքում, երբ դա նրանց համար անհարմար էր. 64-ամյա Գագիկ Սիմոնյանը, ով քրոնիկ բրոնխիտ ունի, ապրում էր Լեռնային Ղարաբաղում հյուրանոցային սենյակում և ս չորս տղամարդկանց հետ, որոնցից շատերն ավելի մեծ էին, քանի որ նա չէր կարող իրեն ֆինանսապես թույլ տալ ավելի մոտ ապրել իր ընտանիքին, ովքեր Հայաստանում էին՝ 6 ժամ մեքենայով վարելու հեռավորության վրա: «Եթե ես իմ [ընտանիքի] մոտ ապրեի, ավելի լավ կլիներ, բայց տեղ գտնելն իսկապես դժվար է: Կառավարությունը չի աջակցի ինձ՝ [Լեռնային Ղարաբաղից] դուրս ապրելու դեպքում»:

Քիչ թվով տարեցներ ունեին խնայողություններ, և, որպես կանոն, մինչև 2020 թվականի հակամարտությունը նրանց միակ արժեքավոր ակտիվները եղել են իրենց տները, հողը և անասունները: Շատերը կորցրել էին գումար աշխատելու ոչ ֆորմալ միջոցների հասանելիությունը, ինչպիսիք են անասնապահությունը կամ հողագործությունը, և դա էլ ավելի խորացրեց տեղափոխության և մեկուսացման զգացողությունները: 77-ամյա Արամ Գասպարյանն ասում էր. «Իմ գյուղում կարողացել եմ անասնապահությամբ զբաղվել, բայց այստեղ անելու բան չկա, ես պարզապես ման եմ գալիս: Միակ մարդիկ, ում հետ ես խոսում եմ, երեխաներն են»:

Նրանք, ովքեր աշխատել էին մինչև 2020 թվականը, սովորաբար չեն կարողացել աշխատանք գտնել հակամարտությունից հետո, և ամնվազն ոմանք այն մարդկանցից, ովքեր կորցրել էին իրենց բիզնեսները, մերժում են ստացել բանկերի կողմից, երբ դիմել են վարկերի համար: 71-ամյա Վալերի Պողոսյանը կորցրել է փայտամշակման իր փոքր բիզնեսը, երբ ադրբեջանական ուժերը գրավել են իր գյուղը: Նա ոգևորված էր նոր բիզնես գաղափարներով, ներառյալ ջերմոցների կամ բիոհարդի սրճարանի մասին մտքերով, բայց ասաց, որ իրեն բանկում իր տարիքի պատճառով մերժել են վարկը. «Բանկն ասում է, որ ես թոշակառու եմ, ուստի ինձ վարկ չեն տրամադրի: Նրանք անհանգստանում են, որ ես կմեռնեմ և իրենց պարտք կմնամ... Իմ մղձավանջն այն է, որ ես չեմ կարողանա և ս մեկ անգամ սկսել և մարդավայել ապրել: Ես ի վիճակի եմ դա անելու: Ինձ պարզապես աջակցություն է պետք»:

Լեռնային Ղարաբաղում փոփոխվող սահմաններն ավելի են դժվարացրել կյանքը նրանց համար, ովքեր զբաղվում էին գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ: Պատերազմից առաջ 60-ամյա Սամվել Գալստյանն իր ապրուստի համար ուրիշների անասուններն էր արածեցնում: Բայց Գալստյանը ստիպված էր հրաժարվել այդ աշխատանքից. «Անհնար է, դու պետք է շատ, շատ զգույշ լինես և անընդհատ հետևես [կենդանիներին], քանի որ նրանք կարող են վազել դեպի [հակամարտության գծի] մյուս կողմը»: Լեռնային Ղարաբաղի Մարտակերտ քաղաքի

ՎԵՐՁԻՆԸ ՓԱՆՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՊԼՄԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱՉԻՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

մերձակայքում՝ շվեդական գծի մոտ գտնվող դաշտում աշխատող 55-ամյա ֆերմերը սպանվել էր դիպուկահարի կրակոցից 2021 թվականի հոկտեմբերին՝ զինադադարից գրեթե մեկ տարի անց:

Մինչ Հայաստանի կառավարությունը պարտավորվել էր անվճար բժշկական օգնություն և դեղորայք տրամադրել Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին, <<Amnesty International>>-ը պարզել է, որ ոչ բոլոր տեղահանված տարեցներն էին տեղյակ այս փաստի մասին, և նրանցից մի քանիսը զգալի ծախսեր էին կրել՝ հետ վերադառնալով Լեռնային Ղարաբաղ՝ հիվանդանոց գնալու կամ ընդհանրապես բուժում ստանալու համար:

ապագա քայլեր

2020 թվականի պատերազմը Լեռնային Ղարաբաղում հստակ ցույց է տալիս այն յուրատեսակ ռիսկերը, որոնց առճակատվում են տարեցները հակամարտության ժամանակ. հաճախ վերջինս են լքում, երբեմն էլ առաջինն են կրակի գծում: Աղբյուրների կառավարությունը պետք է ապահովի տարեցների ապօրինի սպանությունների, խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի և հարկադիր անհետացումների անկախ, անաչառ հետաքննությունը, և նրա զինված ուժերի ցանկացած անդամ, ում նկատմամբ պատասխանատվության բավարար թույլատրելի ապացույցներ կան, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի արդար դատավարությամբ: Ե՛վ Հայաստանում, և՛ Աղբյուրներում տարեցները պետք է ներառվեն քաղաքացիական պաշտպանության և խաղաղաշինության ցանկացած ռազմավարության մեջ, և կողմերը պետք է ապահովեն, որ քաղաքացիական անձանց տարհանման ապագա ծրագրերը արժանի կերպով հաշվի առնեն տարեցների, ներառյալ հաշմանդամություն ունեցողների և միայնակ ապրողների առանձնահատուկ կարիքներն ու ռիսկերը:

Թեև տեղահանությունը կարող է կործանարար լինել բոլոր մարդկանց համար, այն առանձնահատուկ մարտահրավերներ է ստեղծում տարեցների համար: Լեռնային Ղարաբաղում պատերազմը տարեցներին, նույնիսկ նրանց, ովքեր մինչև հակամարտությունն ապրում էին անկախ և իրենց ապրուստը վաստակում, ակնթարթորեն կախվածության մեջ դրեց ուրիշներից, քանի որ նրանք կորցրին իրենց տունը, աշխատանքը և ցանկացած հող կամ անասուն, որով նրանք իրենց ապրուստն էին վաստակում: Ե՛վ այնուամենայնիվ, տարեցները մեծ մասամբ անտեսված են մնում, երբ արձագանք է լինում իրավիճակին, և անտեղի համարվելով՝ կորում է նրանց անկախությունը կամ մերժվում արժանապատվությունը:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները կարող են և պետք է անեն ավելին, որպեսզի այդպես չլինի, և որ տարեցները կարողանան վերականգնել իրենց կյանքը մյուսների հետ հավասար հիմունքներով, այդ թվում՝ ապահովելով նրանց բնակարանի, սննդի, ջրի և ֆիզիկական ու հոգեկան առողջությանն առաջնությունների բավարար հասանելիությամբ: Հայաստանի կառավարությունը պետք է նաև ապահովի, որ տեղահանված մարդկանց, ներառյալ տարեցների համար, բնակարանային և այլ արտոնությունները հասանելի լինեն Լեռնային Ղարաբաղում ապրողների հետ հավասար հիմունքներով, և այդպիսով նրանց իրական ընտրություն տրվի, թե նրանք որտեղ պետք է ապրեն:

Տարեցները, որոնց պատմությունները ներկայացված են այս զեկույցում, քաղաքացիական անձինք էին և որպես այդպիսին պաշտպանված են միջազգային իրավունքով: Սակայն այս պատմությունները բազմաթիվ ուղիներ են ընդգծում, որոնցով հակամարտությունը և տեղահանումը սրում են տարեցների նկատմամբ տարածված նախապաշարմունքների և խտրական գործելակերպի ազդեցությունը: Չինված հակամարտության և հումանիտար ճգնաժամի իրավիճակներում հատուկ ռիսկերով այլ խմբերի հետ համեմատած՝ տարեցների փորձառությունները և հեռանկարները պատմականորեն բացակայում են զեկույցներում, ներառյալ իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, ինչպիսին է <<Amnesty International>>-ը, և անտեսված են եղել մարդասիրական արձագանքներում:

Ներկայումս տարեցների իրավունքների վերաբերյալ համաշխարհային պայմանագիր չկա: Նման պայմանագիրը կվերացներ պաշտպանության կարևոր բացերը, կխրախուսեր տարեցների իրավունքների խախտումների վերաբերյալ հետագա մշտադիտարկումը և վերահսկողությունը, և դրական պարտավորություններ կստեղծեր տարիքով պայմանավորված խտրականության և կարծրատիպերի դեմ պայքարի համար:

Հայաստանի և Աղբյուրների միջև հակամարտությունը ձգվում է շուրջ 3 տասնամյակ, և այն դեռ ավարտված չէ. երկու պետությունների միջև կռիվների բռնկումները սովորական են: Ինչքան հնանում է հակամարտությունը, այնքան ծերանում են նաև այն մարդիկ, որոնց վրա այն ազդում է, իսկ տարեցների համար ռիսկերը մնում են բարձր: Ինչպես ցույց տվեցին 2020 թվականի մարտերը Հայաստանին, Աղբյուրներին և միջազգային հանրությանը, տարեցների պաշտպանության ու ընդգրկման հարցերին լրջորեն վերաբերվելու ժամանակը հիմա է:

ՎԵՐՁԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՊՎՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒ ԻՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒ ԻՆՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը մոտենում է իր երրորդ տասնամյակին՝ դարձնելով այն ամբողջ աշխարհում աճող թվով երկարաձգվող հակամարտություններից մեկը: Ինչքան հնանում են հակամարտությունները, այնքան մեծանում են նաև նրանք, ովքեր ենթարկվում են դրանց ազդեցությանը: 2020-ի մարտերից տուժած տարեցներից շատերի համար հակամարտությունը կրկնվել է: Եվ, այնուամենայնիվ, նույնիսկ այն դեպքերում, երբ տարեցներն ակնհայտորեն ենթարկվում են անհամաչափ բռնության, ինչպես տեղի ունեցավ 2020 թվականի պատերազմում, քիչ պաշտպանություններ կան, որոնք հատկապես բավարարում են նրանց կարիքները, և նրանք մեծ մասամբ մնում են անտեսված և արժանանում քիչ մարդասիրական արձագանքի:

2020 թվականին Լեռնային Ղարաբաղի շուրջ վեց շաբաթ տևած հակամարտությունը հստակ ընդգծում է այն յուրատեսակ ռիսկերը, որոնց առճակատվում են տարեցները պատերազմի ծամանակ: Շատ հաճախ տարեցները եղել են վերջին մարդիկ, որոնք լքել են իրենց գյուղերն ու քաղաքները: Երբեմն նրանք ունեցել են ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն, ինչը խանգարել է նրանց հեռանալ: Այլ դեպքերում նրանց համար անհնար է եղել հեռանալ՝ հետևում թողնելով այն տունը կամ հողը, որն ապահովել էր իրենց տնտեսական անվտանգությունն ու եկամուտը, կամ որը զգացմունքային արժեք կամ կապ է ունեցել իրենց սիրելիների հետ:

Երբ տարեցները չէին հեռանում, ադրբեջանական ուժերը հաճախ նրանց արտադատական մահապատիժների էին ենթարկում, ինչպես նաև խոշտանգումների և այլ դաժան բռնությունների կամ տեղափոխում Ադրբեջանի կայանավայրեր, որտեղ նրանց հաճախ ծեծում էին կամ այլ կերպ վատ վերաբերմունքի արժանացնում, այդ թվում՝ մերժելով բժշկական օգնություն: Հաճախ տարեց մարդու տարիքը նշանակում էր, որ ադրբեջանական ուժերը դիտարկում էին նրանց որպես 1990-ականների պատերազմի հավանական մասնակիցներ, և այդպիսով, ըստ նրանց՝ արդար թիրախ: Ողջ մնացած տարեցների ֆիզիկական և հոգեկան առողջությանը հասցված վնասը կործանարար էր: Ադրբեջանը հստակ պատասխանատվություն ունի ապահովելու ռազմական հանցագործությունների հավասարազոր այս խախտումների անկախ և անաչառ հետաքննությունը, քրեական պատասխանատվության ենթարկել ենթադրյալ հանցագործներին, ընտանիքներին հայտնել իրենց անհայտ կորած հարազատների ճակատագիրը կամ գտնվելու վայրը և տրամադրել ամբողջական փոխհատուցում խախտումների համար: Մինչ այժմ այն անտեսել է այսպիսի գործելակերպի վերաբերյալ միջազգային հանրության կոչերը:

Տարեցները, ովքեր ապահով կերպով դուրս էին եկել Լեռնային Ղարաբաղից, մնացին տեղահանության մեջ, որտեղ նրանք քվեցին իրենց համայնքների ծայրերը: Հակամարտությունից առաջ շատերն ապրել էին անկախ կյանքով, ունեցել էին իրենց ընտանիքներից առանձին տներ և

կարողացել էին գումար աշխատել, հաճախ ոչ ֆորմալ միջոցներով, ինչպիսիք են գյուղատնտեսությունը կամ անասնապահությունը: Նրանք ունեցել էին իրենց սոցիալական տեղն ու դիրքը իրենց համայնքներում: Տեղահանությունը վերացրեց այս ռեսուրսները՝ նրանց մեծապես կախվածության մեջ դնելով իրենց ընտանիքներին:

Թեև Հայաստանի կառավարությունը և Լեռնային Ղարաբաղի դե ֆակտո իշխանությունները քայլեր են ձեռնարկել՝ աջակցելու տեղահանված բնակչությանը, նրանք պետք է ավելին անեն, որպեսզի ապահովեն, որ տարեցներն անմասն չմնան մարդասիրական արձագանքներից: Պարզապես այն պատճառով, որ տարեց մարդն ապրում է իր ընտանիքի հետ, չի նշանակում, որ նրա կարիքները բավարարված են կամ հարգում են նրանց իրավունքները, և առավել հստակ է, որ պետք է աջակցել նրանց՝ արժանապատիվ և անկախ կյանք վարելու համար:

Տարեցները, որոնք դեպքերը ներկայացված են այս զեկույցում, քաղաքացիական անձինք էին և որպես այդպիսին պաշտպանված են միջազգային իրավունքով: Սակայն Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը՝ ինչպես 2020 թվականին, այնպես էլ հակամարտության նախորդ դրսևորումների ժամանակ, ցույց է տալիս այն բազմաթիվ ուղիները, որոնցով հակամարտությունը և տեղահանությունը հավասարապես ազդում են տարեցների վրա՝ սրելով իրենց դեմ գոյություն ունեցող նախապաշարմունքը և խտրականությունը: Հիմա է այն ժամանակը, երբ պետք է առավել համապարփակ ձևով՝ ներառյալ տարեցների իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրով, անդրադառնալ տարեցների պաշտպանության այս բացերին ինչպես հակամարտության ժամանակ և հակամարտությունից հետո, այնպես էլ խաղաղ իրավիճակներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴԵ ՖԱԿՏՈ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

- Նկատի ունենալով այս զեկույցում ներկայացված տարեցների հստակ ռիսկերը՝ հանրային կերպով հստակ և անփոփոխ պարտավորություններ ստանձնել՝ առաջնահերթություն տալու տարեցների պաշտպանությանը՝ միջազգային իրավունքի համաձայն, և զերծ մնալու քաղաքացիական անձանց, այդ թվում՝ տարեցների ցանկացած տեսակի թիրախավորումից;
- Ապահովել, որ տարեցներին առաջնահերթություն տրվի ապահով վայրեր տեղափոխվելիս, և որ նրանք արժանի կերպով ներառված լինեն տարհանման ծրագրերի մշակման մեջ, ինչը պետք է մատչելի կերպով հաղորդվի իրենց: Ապահովել, որ այս ծրագրերը դրոյթներ պարունակեն տարեցների՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցողների և մենակ ապրողների կարիքներին արձագանքելու համար:
- Ապահովել, որ տարեցներն արժանի կերպով ներգրավված լինեն քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև մարդասիրական գործողությունների, վերակառուցման և խաղաղաշինության բոլոր ռազմավարություններում:
- Ապահովել, որ բոլոր տեղահանված մարդիկ, ներառյալ տեղահանված տարեցներն ունենան բավարար սննդի, առողջապահական ծառայությունների և բնակարանի հասանելիություն:
- Ապահովել, որ բոլոր տեղահանված մարդիկ, ներառյալ տեղահանված տարեցներն ունենան ջրի նվազագույն անհրաժեշտ քանակի օգտագործման հնարավորություն՝ անկախ իրենց վճարելու կարողությունից, ինչը երաշխավորված է ջրի իրավունքով:
- Բարելավել տարեցների հետ տարվող աշխատանքները սոցիալական աշխատողների կամ համայնքի կամավորների ցանցի միջոցով: Եթե կատարումը գնահատման կարիք ունի, ուղղակի հարցրեք տարեցներին, որպեսզի խուսափեք տնային տնտեսության մակարդակի հարցումներում նրանց անտեսելուց;
- Ապահովել, որ տեղահանված տարեցները ստանան ֆինանսական կամ այլ աջակցություն, որն անհրաժեշտ է արժանապատիվ և անկախ կյանք վարելու համար, եթե դա նրանց նախապատվությունն է;
- Զայլեր ձեռնարկել՝ նպատակ ունենալով ապահովել տեղահանված տարեցներին ապրուստի միջոցներով, ներառյալ առաջնահերթություն տվող ծրագրերով, որոնք թույլ կտան վերադառնալ աշխատավայր, օգտվել կապիտալից կամ հողից՝ մյուսների հետ ոչ խտրական հիմունքներով:

ՎԵՐՁԻՆԸ ՓԱՆՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱՉՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

- Զայլեր ձեռնարկել՝ նպատակ ունենալով ապահովել, որ տեղահանված տարեցներն օգտվեն արդարադատության և հակամարտությունների հետ կապված փոխհատուցումներից՝ մյուսների հետ հավասար և ոչ խտրական հիմունքներով;
- Ապահովել, որ տեղահանված տարեցներն օգտվեն ֆինանսապես մատչելի և համապատասխան ֆիզիկական և հոգեկան առողջությանն առնչվող ծառայություններից; ապահովել, որ հոգեկան առողջության և հոգետոցիալական աջակցության ծառայությունները հասանելի լինեն տարեցների համար և առաջարկվեն այնպես, որ ընդունելի լինեն և մշակութային առումով համապատասխանեն նրանց, և
- Ապահովել, որ ցանկացած իրավական գործընթաց, որի նպատակն է փոխհատուցում ստանալ միջազգային դատարաններում, արժանի կերպով ներառի տարեցներին, ներառյալ նրանց, ովքեր միջազգային իրավունքով սահմանված հանցագործություններից և միջազգային մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի այլ լուրջ խախտումներից փրկվածներ են, ներառյալ նրանց տարեց հարազատները: Ապահովել, որ փոխհատուցման ցանկացած ներքին մեխանիզմ տարեցների համար հասանելի լինի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Հայաստանում ապրող տեղահանված մարդկանց տրամադրել ֆինանսական կամ այլ տեսակի աջակցություն, մասնավորապես անվճար կացարան կամ վարձակալության վճարը վճարելու օգնություն, որոնք հավասար են Լեռնային Ղարաբաղի դե ֆակտո իշխանությունների կողմից տրամադրվող աջակցություններին՝ նպատակ ունենալով երաշխավորել Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդկանց համար՝ իրենց ապրելու տեղը որոշելու ազատ և կամավոր ընտրությունը; և
- Ապահովել, որ Հայաստանի պատվիրակությունը հաճախի և արդյունավետ կերպով մասնակցի ՄԱԿ-ի՝ ծերացման հարցերով բաց աշխատանքային խմբի հանդիպումներին:

ԱՂԻՔԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Ապահովել, որ պատերազմական հանցագործությունների և միջազգային մարդասիրական իրավունքի այլ լուրջ խախտումների մեղադրանքների, ինչպես նաև տարեցների դեմ հանցագործությունների վերաբերյալ իրականացվեն անկախ և անաչառ հետաքննություններ, և որ ցանկացած անձ, որի նկատմամբ պատասխանատվության ենթարկելու բավարար ապացույց է առկա, քրեական պատասխանատվության ենթարկվի արդար դատավարությամբ;
- Առանց հապաղելու ամբողջական և համարժեք փոխհատուցում տրամադրել միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների մասին օրենքի խախտումների բոլոր տուժածներին, ներառյալ տարեցներին:
- Լիակատար հարգանք դրսևորել միջազգային մարդասիրական իրավունքի, այդ թվում՝ քաղաքացիական անձանց ռազմական գործողությունների հետևանքներից պաշտպանելու պարտականության, և ի թիվս այլ խմբերի՝ տարեցներին հատուկ պաշտպանություն տրամադրելու նկատմամբ:
- Հաշվի առնելով այս զեկույցում ներկայացված տարեցների հստակ ռիսկերը՝ ապահովել, որ տարեցների նկատմամբ խախտումները չկրկնվեն՝ հրապարակավ ստանձնելով հստակ և անփոփոխ պարտավորություններ՝ զերծ մնալու թիրախավորել տարեցներին, որոնք քաղաքացիական անձինք են:
- Ազատ արձակել նրանց, ներառյալ բոլոր տարեցներին, ովքեր դեռ պահվում են Ադրբեջանի կայանավայրերում, եթե նրանք քրեական պատասխանատվության չեն ենթարկվել միջազգայնորեն ճանաչված հանցանքի համար և չեն կրում իրենց ազատագրվումը;
- Որոնել և գտնել անհայտ կորածների վայրը, տեղեկացնել ընտանիքներին նրանց ճակատագրի և գտնվելու վայրի մասին: Ազատ արձակել նրանց, ովքեր բռնությամբ են անհետացել՝ ներառյալ տարեցներին: Մահվան դեպքում նրանց մարմինները գտնել և արժանապատվորեն վերադարձնել իրենց սիրելիներին:
- Ստեղծել անհրաժեշտ պայմաններ տեղահանված էթնիկ հայերի, մասնավորապես տարեցների անվտանգ, արժանապատիվ, կայուն և կամավոր վերադարձը դեպի հակամարտությունից տուժած գյուղերի և քաղաքների իրենց տներ ապահովելու համար, ներառյալ ավերված տների և քաղաքացիական ենթակառուցվածքների վերակառուցման ծրագրերի միջոցով, և քաղաքացիական բնակչության համար ապահով և համարժեք

ՎԵՐՑԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

պայմանների ստեղծմամբ՝ ներառելով տնտեսական և եկամուտ ստեղծելու հնարավորություններ;

- Ապահովել, որ տարեցները, ինչպես նաև նրանց ներկայացնող կազմակերպություններն արժանի կերպով ներառված լինեն տարհանման ծրագրերի մշակման մեջ; ապահովել, որ այս ծրագրերը դրույթներ պարունակեն տարեցների՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցողների և մենակ ապրողների կարիքներին արձագանքելու համար; և
- Ապահովել, որ տարեցները, ներառյալ իրենց ներկայացնող կազմակերպությունները, արժանի կերպով ներառված լինեն քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև մարդասիրական գործողությունների, վերակառուցման և խաղաղաշինության բոլոր ռազմավարություններում:

ՌՈՒԽԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆԸ

- Լրագրողների, իրավապաշտպան կազմակերպությունների և մարդասիրական կազմակերպությունների համար լիարժեք և անկաշկանդ մուտք թույլատրել դեպի Լեռնային Ղարաբաղ, որպեսզի այնտեղ ապահովվի հումանիտար իրավիճակի համապարփակ մշտադիտարկումը՝ նաև տարեցների շրջանում; և
- Ապահովել, որ խաղաղապահ ուժերը տեղեկացված և վերապատրաստված լինեն՝ արձագանքելու տարեցների ռիսկերին և կարիքներին, և որ տարեցները ներառված լինեն քաղաքացիական պաշտպանության, մարդասիրական գործողությունների, վերակառուցման և խաղաղաշինության բոլոր ռազմավարություններում:

ՄԱԿ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

- Ուժեղացնել զինված հակամարտության ժամանակ տարեցների կյանքի պայմանների մշտադիտարկումն ու ընդլայնել դրանց մանրամասն ներկայացումը, ինչպես նաև պարբերական հաշվետվություններ պահանջել զինված հակամարտության մեջ գտնվող տարեցների կյանքի պայմանների վերաբերյալ;
- Ապահովել, որ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին ցանկացած բանաձև կամ հայտարարություն ընդգծի տարեցների կյանքի պայմանները; և
- Նախագծի առնչությամբ կոնկրետ ժամկետներ և առաջարկություններ ներառելով՝ քննարկումներ սկսել տարեցների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ՝ սերտորեն խորհրդակցելով ՄԱԿ-ի՝ ծերացման հարցերով բաց աշխատանքային խմբի հետ:
- Առաջարկություններ ներկայացնել այն պետություններին, որոնք իրենց Համընդհանուր Պարբերական Վերանայումն են անցնում՝ պաշտպանելու հակամարտության ժամանակ տարեցների իրավունքները, ներառյալ քննարկումներ սկսելով տարեցների իրավունքների մասին Կոնվենցիայի առնչությամբ՝ սերտորեն խորհրդակցելով ՄԱԿ-ի՝ ծերացման հարցերով բաց աշխատանքային խմբի հետ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ

- Ապահովել, որ Եվրոպայի խորհուրդը և միջկառավարական ու փորձագիտական մարմինները, համագործակցության ծրագրերը և Եվրոպայի խորհրդի գրասենյակներն ըստ երկրների շարունակեն մշտադիտարկել և ընդգծել Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունից տուժած տարեցների կյանքի պայմանները; և
- Ապահովել, որ Հայաստանի (2023-2026թթ.) և Ադրբեջանի (2022-2025թթ.) համար Եվրոպայի խորհրդի հատուկ գործողությունների ծրագրերը ներառեն հատուկ դրույթներ, որոնք կանդրադառնան տարեցների՝ երկարատև հակամարտությունից, նաև 2020 թվականի ամենավերջին մարտերից բխող ռիսկերին:

ՎԵՐՁԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՎԱՍՏԱՐՑՈՒԹՅՈՒՆՈՒ ՊԱՏԵՐԱԶՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ:

**AMNESTY INTERNATIONAL-Ը
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՇԱՐԺՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ: ԵՐՔ ՄԵԿ
ՄԱՐԴՈՒՆԿԱՏՄԱՍԲ
ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Է ՊԱՏԱՀՈՒՄ,
ՎԵՐԱԲՐՈՒՄ Է
ԲՈԼՈՐԻՍ ՎՐԱ**

ՀԵՏԱԴԱՐՑ ԿԱՊ



info@amnesty.org



+44 (0)20 7413 5500

ՄԻԱՑԵՔ ՉՐՈՒՅՑԻՆ



www.facebook.com/AmnestyGlobal



@Amnesty

ՎԵՐՋԻՆԸ ՓԱԽՉՈՂՆԵՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Քանի որ Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը թեևակոխում է իր երրորդ տասնամյակը, 2020-ին վերսկսված մարտերն ընդգծեցին ռիսկերը մեկ կոնկրետ խմբի՝ տարեցների համար: Էթնիկ տարեց հայերը միշտ ամենավերջիններն են լքել իրենց գյուղերը և, ըստ տեղեկությունների, հենց նրանց է բաժին հասնում խաղաղ բնակչության շրջանում մահերի կեսից ավելին: Շատերը ադրբեջանական ուժերի կողմից ենթարկվել են ռազմական հանցագործությունների, այդ թվում՝ արտադատական սպանությունների, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կալանավորված ժամանակ: Որոշ տարեց տղամարդիկ դեռ անհայտ կորած են համարվում:

Չեկույցը մասնավորապես հիմնված է Հայաստանում 69 անձի հետ անցկացված հարցազրույցների վրա, այդ թվում՝ 42 տարեց կանանց և տղամարդկանց հետ: Այն ուսումնասիրում է տարեցների փորձը հակամարտության ժամանակ, ինչպես կոնկրետ խախտումները, այնպես էլ պատերազմի հոգեբանական ազդեցությունը: Չեկույցը նաև ուսումնասիրում է տարեց մարդկանց յուրահատուկ կարիքները և թե ինչպես են իշխանությունները ոչ համարժեք արձագանքել նրանց կարիքներին:

Ադրբեջանը պետք է երաշխավորի այն անձանց պատասխանատվության ենթարկվելը, որոնք իրականացրել են պատերազմական հանցագործություններ, և երկու կողմերն էլ պետք է հստակ և հաստատակամ պարտավորություններ ստանձնեն՝ առաջնահերթություն տալով տարեց մարդկանց պաշտպանությանը: Հաշվի առնելով այս զեկույցում փաստագրված տարեց մարդկանց համար հստակ վտանգները, միջազգային հանրությունը պետք է արագացնի տարեցների իրավունքների մասին Կոնվենցիայի ընդունելու ջանքերը, որը կվերացնի գոյություն ունեցող օրենսդրական բացերը: